մայրն, վանքիս և Թադէոս առաքելոյ վանքի վանահայր Գասպար եպիսկոպոս 1200 անձինքով սպանուած է։

Ճուճանցի Մաղաքիա եպիսկոպոս որ ս. սեղանի գմբէթը և տաճարին աւերած տեղերն նորոգեց Իսախ փաշայի ձեռօք։

Այս Մաղաքիա եպիսկոպոս պատճառ եղած է Բագրեւանդայ Հայոց գաղթելուն։

1765 թուականներուն Զաքարիա վ. իբրև նուիրակ կը յղուի Էջմիածնէից ի Բագրեւանդ ուր և առաջնորդ կը հաստատուի։ Սա տիրացու Պետրոսի ձեռօք թուղթ կը տայ Մաղաքիա եպիսկոպոսին, ինք կը յաջորդէ, նոյն տիրացուն կը ձեռնադրէ վարդապետ, որ քառասնից մէջ կը մեռնի։

Մկրտիչ եպիսկոպոս Շորոթեցի, Տաթեւու միաբան, իւր 12 միաբանով վանքս կը գայ, նորա յաջորդեց ճգնաւոր Մկրտիչ Գրիգ, որոյ ետ Գալուստ, սորա ետ Խաչատուր, որ յետոյ եղև անուանի։

Դա Զաքարիայի և Մկրտչի հոգեղաւակն էր։

Սորա ետ յաջորդեց Երևանցի Թումա վարդապետ, որ քիչ օրէն վախճանեցաւ։

Յորմէ յետոյ Բագրեւանդայ Երանոս գիւղացի Սահակ եպիսկոպոս առաջնորդ եղաւ, սա Նաւրուզ գիւղացի քաջութեամբ հռչակաւոր Ռէս Ալոն միշտ իւր մօտ կը պահէր։ Սորա օրոմն այս վանքի մէջ Դանիէլ կաթուղիկոս ձեռնադրուեցաւ, Սահակ ետ Դանիէլից նոյն վանքի մէջ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ։

Բատոյ եպիսկոպոս՝ քննութեան համար Էջմիածնէն վանքս եկաւ, յետոյ վանահայր կարգուեցաւ, ամբաստանուեցաւ և պաշտօնանկ եղաւ։

Սորա յաջորդեց Երանոսցի Գալուստ վարդապետ,